

# ՍԻՐԱԿԱՐՕՏ ՀՈԳԻՆԵՐ

ԼԵՒՈՆ ԶԱԻԷՆ ՍԻՐՄԷԼԵԱՆԻՆ ԵՒ ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆԻՆ  
ՓՈԽԱՆԱԿԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Խմբագրեց և ծանոթագրեց  
ԴՈԿՏ. ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ

ՈՒՈԹՉԷՄ  
1998

Ա.

**ՍԻՌՄԵԼԵԱՆՆ**

**ՆԵՐԱԾԱԿԱՆ**

**Ինչո՞ւ Այս Ժողովածուն**

Կորուստէ փրկած ըլլալու և հանրութեան ներկայացնելու համար 1945-ին աչքերը փակած Վահան Թէքէեանին (ծն. 1878) և կիսադար մը ետք, 1995-ին, թերևս ալ «ծառ մը ըլլալու համար» հողին միախառնուած Լևոն Զաւէն Սիրմէլեանին (ծն. 1905) միջև փոխանակուած նամակներուն ամբողջութիւնը<sup>1</sup>:

Թէքէեանին նամակները արժանացած են քանի մը հրատարակութիւններու:

Անոնց մեծ մասը, թէև յապաւումներով, առաջին անգամ լոյսին տուած է Բենիամին Նորիկեանը, նա՛խ զանոնք հրատարակելով իր խմբագրած «Նոր Գիր» եռամսեայ հանդէսին մէջ, 1945-1946-ի 4-րդ (ձմեռ) թիւէն սկսեալ և ապա զանոնք խմբելով հատորի մը մէջ<sup>2</sup>, Սիրմէլեանին հաանութեամբ և այդ հատորին հասոյթը Վահան Թէքէեանին անունով մրցանակատր հիմնադրամի մը յատկացնելու նպատակով, որպէսզի ան ըլլայ մնայուն քաջալերութեան միջոց մը սփիւռքի հայ գրողներուն համար<sup>3</sup>:

Նամակներուն երրորդ հրատարակութիւնը կատարած է Անդրանիկ Անդրէասեանը, ըստ կարելոյն վերականգնելով նախորդ հրատարակութիւններուն մէջ յապաւեալ հատուածները, և սակայն տեսադաշտէ բաց ձգելով քանի մը պատատիկներ<sup>4</sup>:

Չորրորդ անգամ, նամակները ընթերցողին բերած է Փրոֆ. Աւետիս Սանճեանը՝ իր կազմած «Նամականի»ին մէջ<sup>5</sup>: Ի տարբերութիւն նախորդներուն, ան վերականգնած է համարեա բոլոր բացթողումները և տուած է ծանօթագրութիւններ:

Ասոնց դիմաց, Սիրմէլեանէն ընդամենը քանի մը նամակ հրատարակուած է ցարդ, Արփիկ Աւետիս-

1- *Ամբողջական բառը պայմանական է: Թէքէեանէն ցարդ բացակայ կը մնայ առ նուազն երկու նամակ:*

2- Վահան Թէքէեանի Նամակները Լևոն Զաւէն Սիրմէլեանին. Լոյս Զուարթ, գրեց Լևոն Զաւէն Սիրմէլեան, Բ. տպագրութիւն, Փարիզ 1950:

3- *Անդ, էջ 15:*

4- Լևոն Զաւէն Սիրմէլեան, Լոյս Զուարթ (Քերթուածներ) Գ. տպագրութիւն և Վահան Թէքէեանի Նամակները Լևոն Զաւէն Սիրմէլեանին, խմբագրեց Անդրանիկ Անդրէասեան, Պէյրութ, 1972:

5- Վահան Թէքէեան, Նամականի, կազմեց, խմբագրեց և ծանօթագրեց Աւետիս Գ. Սանճեան, Լոս Անճելիս, 1983:

Բ.

**ԹԷՔԷԿԱՆՆ**

Եանին կողմէ, առանց սակայն որևէ ծանօթագրութեան<sup>6</sup>:

1982-ին, երբ կը պատրաստէինք աւարտաճատ մը Թէքէեանին մասին, առաջին անգամ մտածումն ունեցանք մէկ կողքի տակ հրատարակութեան տալու երկու գրողներուն իրարու հետ փոխանակած նամակները, որպէսզի աւելի ամբողջականօրէն ընթերցողին և ուսումնասիրողին բացուին աշխարհները անգաւակ քերթողին և հայրակորոյս որբին, երկու սիրակարօս հոգիներուն:

Երևանի Եղիշէ Չարեանի Անուան Գրականութեան և Արուեստի Թանգարանը կ'ընծայէր մեզի գաղտնիարը գործնականացնելու պատեհութիւնը, որովհետև հո՛ն էին այս հատորին մէջ օգտագործուող բոլոր նամակներուն բնագրերը, և որովհետև Թանգարանին այդ օրերու տնօրէն արձակագիր Ստեփան Ալաջաջեանը բարեացակամ կարգադրութեամբ մեզի կը տրամադրէր պատճենները Սիրմէլեանին նամակներուն:

Դիւանաթուղթերը ի յայտ կը բերէին նախորդ բոլոր հրատարակութիւններէն դուրս մնացած պատահիկներ Թէքէեանէն, Ինչպէս նաև այդ հրատարակութիւններուն մէջ տեղ գտած թերութիւններ:

1987-ին, մեր Գալիֆունիա առաջին այցելութեան, արձակագիր Նուպար Ակիշեանին ընկերակցութեամբ հանդիպում մը կ'ունենայինք Սիրմէլեանին հետ, սպասուելու համար իր հասանութիւնը իր կենդանութեան լոյսին տալու իր նամակները: Եւ կ'ապահովէինք այդ արտօնութիւնը: Սակայն, հարկ կ'ըլլար սպասել տասնամեակ մը...:

Հիմա, հրատարակ հանելով այս նամականին, կը նպատակադրենք Թէքէեանին և Սիրմէլեանին յարինքնաբացայայտումը և զրոյցի բռնուիլը անծանօթ հոգիներու հետ՝ արուեստի ուժով դարբնուող բարեկամութեան մը ընդմէջէն...:

6- «Սովետական Գրականութիւն» ամսագիր, 1980, թիւ 6, էջ 100-107: Հրատարակուած են 15.8.1922, 2.11.1922, 22.1.1923, 6.2.1923, 8.2.1923, 2.8.1923, 22.11.1924 թուակիր նամակները:

**ՍԻՐՄԷԼԵԱՆՆ**

**Ի՞նչ կը Բերէ Մեզի Այս Ժողովածուն**

Գաղափարներու և յոյզերու աշխարհը Թէքէեանին և Սիրմէլեանին:

Նաև՝ «հօր» և «որդի»ի եզակի կապ մը հայ գրականութեան պատմութեան մէջ:

Աւելի՛ն: Հարուստ առաղձ մը՝ ատելի հարազատօրէն ու լաւ ճանչնալու հնչեակի վարպետն ու իր գրական ուղին որոնող սանը. խորասուզուելու ներաշխարհին մէջ երկու գրողներուն. կատարելու հոգեվերլուծական փորձ. քաղելու կենսագրական տուեալներ. հանդիպելու ժամանակաշրջանի պատմական իրադարձութիւններու արձանագրութեան և ըմբոշխնելու, ըմբոշխնելո՞ւ արուեստ մը, որ կը քակուի էջ առ էջ:

Եւ դեռ՝ պատմութիւնը հայ որբերուն ու ցրօնքին. նախանիօ՞ տարագիր հայութեան գոյսպայքարին, ինքնապահպանութեան և ինքնագարգացման ուսումնասիրութեան:

Մէկ խօսքով՝ հարստութիւն մը, որմէ բաժին կրնայ իյնալ գեղագէտին, գրականագէտին, լեզուաբանին, իմաստասէրին, պատմաբանին, հոգեբանին... ու մէն մի ընթերցողի:

**Նախորդ Արժևորումներ**

Թէքէեանին նամակներուն հրատարակութիւնը, անցեալին, առիթ տուած է գնահատումներու:

Առաջին արժևորողն եղած է Սիրմէլեանն ինքը:

«Այս նամակները, որ գրուած են լեցուն գեղեցկութեամբ, կը յայտնեն Վահան Թէքէեան մարդը և բանաստեղծը, ճիշդ այնպէս ինչպէս որ էր իր քշիկ մը խիստ և միանգամայն պատկառելի երևոյթին տակ»:

«... Անոնք կը պարունակեն գրական և կենսագրական արժէք»<sup>7</sup>:

7- Վահան Թէքէեանի Նամակները Լևոն Զաւէն Սիրմէլեանին. Լոյս Զուարթ, գրեց Լևոն Զաւէն Սիրմէլեան, Բ. տպագրութիւն, Փարիզ 1950, էջ 12-13:

Դ.

**ԹԵՔԵԿԱՆ**

Գրադատ Յովհաննէս Ասագեանը, 1950-ին հրատարակուած նամականիին ստաջին գրախօսողը, կ'ըսէ.

«Հատուածներ կան անոնց մէջ, որոնք հասարակ տեղիքէն վեր չեն բարձրանար, ու քիչ նամակներ ամբողջութեամբ նմուշներ կը հանդիսանան խոր մտածման և նուրբ արտայայտութեան: Եւ սակայն, անոնք, իրենց էութեանը մէջ երևան կը բերեն Թէքէեան մարդը՝ իր բանաստեղծի մանկատիպ խառնուածքին մէջ»<sup>8</sup>:

Աւելի շուայլ է Արմէն Տատուրը. «Գեղեցիկ արտայայտութիւններով – մտածում և հայրենասիրութիւն – այնքան հարուստ այս գիրերը, ճշմարիտ գոհարներ են, ոսկիի հսկայ հանքեր՝ որոնցմէ կրնանք անսպաս պատահիկներ փրցնել:

«Հայ Թէքսփիլեան անմահ շունչ մը, յորդատուութիւն մը՝ «Հնչեակներ»ուն հաւասարող ճոխութեամբ և այլազանութեամբ, արտայայտութեան կատարելութիւն մը՝ այս թուղթերուն մէջ. թուղթեր՝ որոնք կը պատմեն Վարպետին ոչ միայն սիրոյ, տառապանքին, բաժանումին, յոյսերուն, ծրագիրներուն, յուսահատութիւններուն և մտահոգութիւններուն պատմութիւնը, այլ նաև կը շեշտեն, սիրելի՛ կը դարձնեն մեզի, հայրութեան ներկան և սպագան միշտ իր մտատանջութիւններուն առարկան ընող... պայքարող հայրենասէր որբերու պաշտպան հայը, մարդը...»

«... Թէքէեան... կը ներկայանայ իբրև անվիճելի վարպետ նամակագիր մը...», «...Նամակները կ'անցնին սահմանը անձնականին, ազգայինին. անոնք ունին համամարդկային անհերքելի արժէք...»<sup>9</sup>:

Գուրգէն Մխիթարեանը, ատելի զուսպ, կը նշէ. «Մինակ մարդու մը, տրտում ու զգայուն հոգիի մը նամակներն են անոնք, որոնց մէջ կայ չիրականացած հայրութեան մը զգացումը, և, նաև, գուրգուրանքը՝ գրականութիւնը խորապէս սիրող անձի մը»:

«...Նամակները շահեկան են ոչ միայն բանաստեղծի մը զգացումներուն ու մտածումներուն իբր

8- «Նոր Գիր» եռամսեայ հանդէս, ԺԳ. տարի (գարուն), 1951 թիւ 1, էջ 52:

9- Արմէն Տատուր, Նամակագիր Թէքէեանը, «Արև» օրաթերթ, Գահիրէ, 26 Յունիս 1951-3 Յուլիս 1951, 7 յաջորդական թիւով:

Ե.

**ՍԻՌՄԷԼԵԱՆՆԵՐ**

թարգման, այլև իրենց յուզած գրական կողմնակի հարցերով...: Իր արձակը, թէև դարձդարձիկ ու երկար պտոյտներով, կոկիկ է ու խնամուած: Իր նամակներուն մէջ ալ նոյն մարդն է Թէքէեան – խաղաղ, արուեստագէտ, զգացումի և մտածման տարերքով, շատ խնամուած բայց միշտ հետաքրքրական: Իր նամակներն ալ, ինչպէս իր քերթուածները, մտերմասացութիւններ են»:

Իսկ ակնարկելով Սիրմելեանին նամակներէն տրուած քանի մը հատուածներուն, կ'աւելցնէ թէ անոնք «կը վկայեն Սիրմելեանի տաք ու յորդ խառնուածքի մասին, իրենց անկեղծութեամբն ու մտածման թարմութեամբը»<sup>10</sup>:

Պետրոս Զարոյեանը, կարծէք սպազայ թիրիմացութիւններու իբրև կանխարգիլում, կ'ըսէ. «Զգայարանական միջամտութիւն մը չեմ կրնար տեսնել գորովի այն զեղումին մէջ, որով թաթաւուն են այդ նամակները, և կը վկայեն պարզապէս, և անգամ մը ևս՝ անպարագրելի այն ցաւին մասին որ անզուսկ այդ քերթողինը եղաւ»<sup>11</sup>:

Անդրանիկ Անդրեասեանը, 1972-ին վերահրատարակելով Թէքէեանին նամակներն ու արժևորելով զանոնք, կը գրէ թէ անոնք կը բանան «իմացական ու հոգեկան վայելքի հարուստ գանձարան մը: ...Անոնք վարակիչ ջերմութեամբ ու թախիծով կ'արտայայտեն իրեն զլացուած զուսկի մը հանդէպ այն անհուն սէրն ու խանդակաթ կարօտը, որոնցմով բանաստեղծը կը տուայտէր...»:

«Թէքէեանին նամակները նաև խոր յուզումներով, գեղակերտ պատկերներով և յորդ զեղումներով բանաստեղծութիւններ են, որոնց մէջ անձնական տառապանքը, արուեստի դատումները և ազգային հոգերն ու վիշտերը կ'ընդլուծուին իրարու, գրեթէ մոռցուած շրջանի մը և արտակարգ սերունդի մը ապրած ողբերգութեան տխուր արարները բանալով: Անոնք միայն մեծ բանաստեղծէ մը ժառանգուած թուղթէ նշխարներ չեն: Անոնք նաև մշտապէս բարսխող սիրտի մը, և վերլուծող միտքի մը, և գեղահիւս արուեստի մը կենդանի վկայութիւնն են»<sup>12</sup>:

10- Գորգէն Մխիթարեան, Վահան Թէքէեանի նամակները, «Հայրենիք» ամսագիր, Պոսթոն, ԻԹ. տարի, 1951, թիւ 5, էջ 110-112:

11- Պետրոս Զարոյեան, Վահան Թէքէեան Այնպէս Ինչպէս Ծանշցայ Զինք, «Անի» ամսագիր, Պէյրութ, Ե. տարի, 1952, թիւ 9, էջ 486:

12- Լևոն Զատեն Սիրմելեան, Լոյս Զուարթ (Քերթուածներ) Գ. տպագրութիւն և Վահան Թէքէեանի նամակները Լևոն Զատեն Սիրմելեանին, խմբագրեց Անդրանիկ Անդրեասեան, Պէյրութ, 1972, էջ 47-48:

2.

**ԹԷՔԵԿԱՆ**

Մեզի ծանօթ վերջին արժևորումը կատարած է Փրոֆ. Ալետիս Սանճեանը՝ իր պատրաստած նամականիին ներածական բաժնին մէջ, վերաշարադրանքներ և մէջբերումներ կատարելով նամակներէն:

Սանճեանը նամակներուն մէջ կը գտնէ «Վարակիչ շերտութեամբ ու թախիժով արտայայտուած... անհուն սէր ու խանդաղատանք» հանդէպ... «որդեգիր զաւակին»: «...Այս նամակները, անշուշտ, շահտ աւելի բան կ'ըսեն բանաստեղծին զգացումներուն և հոգեկան ապրումներուն՝ քան իր սիրոյն և գուրգուրանքին առարկայ Սիւրմէլեանին մասին»...<sup>13</sup>:

Այլապէս ալ նամակները կ'ըսեն թէ Քերթողն իր մեծ եղբոր հոգածութիւնը, հայր չեղած մարդու աղապատանքը, բոլորովին չանցած պատանութեան մը անուշ երազները փոխադրած է իր կրտսերագոյն եղբոր կամ սիրտի ու միտքի զաւակին վրայ:

Արդարօրէն հպարտ ու մարդկօրէն երջանիկ ապրուստի ի խնդիր բարձր բարոյականով թաթաւուն խորհուրդներ պարունակող նամակներուն մէջ կը գտնենք նոր ապացոյց մը Թէքեանին անձին ու գործին անխարդախ միասնութեան:

Սիւրմէլեանին նամակները, որոնք կը բացայայտեն զարմանալի հասունութիւն մը, որ բացատրելի է, անշուշտ, կանուխկեկ հարուստ փորձառութեամբ մը, առաջին անգամ արժևորուած են Թէքեանին իսկ կողմէ: Իր նամակներէն մէկուն մէջ (տես էջ 142), «հայր» քերթողը Սիւրմէլեանին նամակներուն համար կ'ըսէ. «... Իւրաքանչիւր նամակդ արուեստի կատարեալ գործ մը..., հոգիով ու միտքով լեցուն ինչպէս է բուն արուեստը. ի զուր ամենէն բժախնդիրը *fausse note* մը պիտի փնտռէր անոնց մէջ...»:

Օշականը Սիւրմէլեանին «Լոյս Ջուարթ»ը գրախօսած պահուն մատնանշած է արդէն հրաշքի համագորտ սարօրինակ ընդունակութիւնները իր ցեղին որբացեալներուն:

13- Վահան Թէքեան, Նամականի, կազմեց, խմբագրեց և ծանօթագրեց Ալետիս Գ. Սանճեան, Լոս Անճելըս, 1983, էջ 38-46: Տեղին է դիտել տալ թէ Սանճեանը թիրիմացաբար նշած է թէ Թէքեանին նամակները առաջին անգամ հրատարակուած են 1950-ին: Ժիշդ պիտի ըլլար ըսել՝ 1945-1946-ին, «Նոր Գիր»ին մէջ:

Է.

**ՍԻՆՐՄԵԼԵԱՆ**

**Յարաբերություն Մը Եւ Իր Դրսերումը Գրականության Մէջ**

Սիրմելեանին և Թէքէեանին յարաբերությունն սկիզբ առած է 1922-ին, Պոլիս, երբ Սիրմելեանը Թէքէեանին խմբագրած «Ժողովուրդի Ջայնը» օրաթերթին մէջ հրատարակելէ ետք քանի մը բանաստեղծություն, Թէքէեանին կողմէ հրատէր ստացած է հանդիպումի մը համար:

Պատճառը: Ո՛չ միայն բանաստեղծական շնորհը պատանիին, այլև, ու յատկապէս, անոր դիտարութիւնը՝ Միացեալ Նահանգներ մեկնելով երկրագործություն ուսանելու «Հայաստանի համար»:

Սիրմելեանը Թէքէեանին հետ իր յարաբերութեան նախապատմութեան, 1922-ի Յունիսին անոր հետ իր առաջին հանդիպման և զանազան առիթներով անկէ կրած իր տպաւորություններուն մասին արտայայտուած է հինգ գրություններով<sup>14</sup>:

Սիրմելեանը իր տասնհինգին մէկն էր այն քառասունի չափ որբերէն, որոնք Պոլսոյ Էսայեան Վարժարանին շէնքը բնակելով, կը յաճախէին Ազգային Կեդրոնական Վարժարան, որուն խնամակալութեան անդամներէն մէկն էր Թէքէեանը:

Կեդրոնականի աշակերտի հանգամանքով, հաւանաբար 1921-ին, Սիրմելեանը առաջին անգամ կը տեսնէ Թէքէեանը Կեդրոնականի հանդիսարանին մէջ, անոր տուած մէկ բանախօսութեան առիթով:

«Ան կը խօսէր ամենէն սքանչելի հայերէնը, որ ես երբևէ լսած էի, չափուած բառերով, առանց հոնտորական պաճուճանքի, և կը նմանէր բանաստեղծներու իշխանի մը»: Կամ, «Պարզապէս հմայուած էի իր լեզուէն – շիտակ, ճաշակաւոր և առա՛նց ճարտասանական զարդարանքի: Առաջին առթիւ իսկ Թէքէեան տպաւորեց զիս որպէս մէկը որ իսկապէս տէր էր լրջութեան մը որ ունի կշիռք և մեծություն»: «Խօսեցաւ ան *անկլօ-սաքսոն* հանդարտութեամբ որ իր բանաստեղծութեան յատկանշական կէտերէն մէկն է»:

Թէքէեանը պատասխանատու խմբագիրն էր «Ժողովուրդի Ջայնը» օրաթերթին և արդէն հրատա-

14- Leon Z. Surmelian, *I Ask You Ladies and Gentlemen, Ե. տպագրություն, Նիւ Եորք, 1945, էջ 257-265:*

Վահան Թէքէեանին Հետ Պոլսոյ Մէջ, «Նոր Գիր», Է. տարի (*ձմեռ*), 1945-46, թիւ 4(28), էջ 229-234:

Վահան Թէքէեանի Նամակաները Լևոն Զաւէն Սիրմելեանին. Լոյս Զուարթ, գրեց Լևոն Զաւէն Սիրմելեան, Բ. տպագրություն, Փարիզ 1950, էջ 5-10 (*անգլերէն*) և *նոյնին հայացումը էջ 11-17:*

Բանաստեղծին Վեհությունն Ու Տուայտանքը, թրգմ. Անդրանիկ Անդրեասեանի, «Սովետական Գրականություն» ամսագիր, Երևան, թիւ 6, 1980, էջ 96-99:

Վահան Թէքէեան, «Յուշարար-Միութիւն» պաշտօնաթերթ ՀԲԸՄ-ի, Նիւ Եորք, 52-րդ տարի, թիւ 12, 15 Յունիս 1965, էջ 30-31:



Ը.

**ԹԵՔԵԿԱՆ**

րակած էր երկու քերթուած Սիրմէլեանէն, «առանց գիտնալու» անոր ո՛վ ըլլալը, երբ Հայ Գիտատնտեսական Միութիւնը կը հաւանի Սիրմէլեանն ուղարկել Միացեալ Նահանգներ՝ ուսանելու երկրագործութիւն:

Ապահովելու համար անհրաժեշտ ճանապարհա-ծախար, Սիրմէլեանը կը դիմէ Կեդրոնականի խնամակալութեան: Եւ ահա, կը տեղեկանայ թէ Վահան Թէքեանը կ'ուզէ զինք տեսնել:

Առաջին հանդիպումը տեղի կ'ունենայ օրաթերթին խմբագրատան մէջ, տնօրէն Գեղամ Գալաֆեանին ներկայութեան, երբ «Թէքեան ... միայն երեք ոտանատր հրատարակած էր» Սիրմէլեանէն:

Ի զուր կ'անցնին Թէքեանին ջանքերը՝ տարհամոզելու որ պատանին մնայ Ազգային Կեդրոնական Վարժարանին մէջ և դառնայ բանաստեղծ: Թէքեանը մտավախութիւն կը յայտնէ. «Ամերիկեան քաղաքակրթութիւնը շատ հզօր է, քեզ ալ պիտի կլլէ ուրիշ միլիոնատրներու նման: Պիտի դադրիս հայ ըլլալէ հոն: Պիտի կորսուիս մեր գրականութեան և ազգին համար»:

Սիրմէլեանը կը վստահեցնէ թէ բնա պիտի չկորսուի, մտածելով, սակայն, այդ պահուն, թէ չարով լեցուն աշխարհի մը մէջ հայ բարի քերթողները պատասխանատուն եղած են հայոց ազգային աղէտներուն, ներատեալ՝ ցեղասպանութեան...: Թէքեանին նայելով, Սիրմէլեանը միտքէն կ'ըսէ. «Քանի որ դուն նշանատր բանաստեղծ ես, մեր ժողովուրդը քեզ ընտրեց գլխատրելու մեր ազգային պատմիրակութիւնը Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովին: Ի՞նչ ստացանք անկէ: Ոչի՛նչ»<sup>15</sup>:

Մինչև «Աքրոպոլիս» նաով իր Պոլսէն մեկնումը 6 Օգոստոս 1922-ին, Սիրմէլեանը «հինգ-վեց անգամ» կը տեսակցի Թէքեանին հետ և Միացեալ Նահանգներ հասնելէ առաջ իսկ նախաձեռնարկ կ'ըլլալ թղթակցութեան մը, որուն ընթացքին Թէքեանը պիտի դառնար իր «հոգևոր հայր»ը:

«Պոլիս՝ չէի գիտեր թէ որչափ տրտում էր ան: Թէքեան իմ աչքիս կ'երևէր մեծ մարդու մը հմայ-

15- Թէքեանը պարզ անդամ մըն էր Ազգային Պատմիրակութեան, որուն նախագահութիւնը վստահուած էր Պողոս Նուպարին:

Թ.

**ՍԻՆՏՐՖԵԼԵԱՆ**

քովը, բայց ան ալ ինձի պէս որք մըն էր, և մնաց անտուն աքսորական մը, լուռ ներկայացուցիչը գաղթական հայ մտատրականին մարտիրոսագրութեան»:

«... Տրտում և միևնաչ էր Թէքէեան: ...Ատենին, իր իսկ խնդրանքով, փճացուցած եմ իր նամակներէն մէկը: ...Այնքան ընկճուած, ա՛յնքան պարտասած հոգի մը կը մատնէր այդ նամակը...»<sup>16</sup>:

«Իմ հոգեկան աքսորիս և կղզիացումիս մէջ զինք ևս կը գտնէի ուրիշ, ինք իր մէջ մեկուսացած ու մենատր անձ մը: Այնպէս որ, հակառակ մեր տարիքներուն միջև եղած լայն տարբերութեան..., մենք իրարու նման էինք»:

Սիրմէլեանէն իր ստացածով ինքզինք հարստացած նկատած Թէքէեանին պարագային, հայր և որդիի այս իրօրինակ յարաբերութիւնը պիտի գտնէր զանազան դրսևորումներ:

1923-ին, որբախնամ աշխատանքի շրջանին, Թէքէեանը Սիրմէլեանին օրինակով պիտի ջանար խանդավառել որբեր ու որբապաշտպաններ<sup>17</sup>. ապա իր բարեկամ Տիգրան Հանրնէանէն գումար մը ապահովելով հրատարակութեան պիտի տար Սիրմէլեանին «Լոյս Չուարթ» քերթողագիրքը՝ անոր մէջ խմբելով «Ժողովուրդի Չայնը» օրաթերթին մէջ հրատարակուած և իրեն յղուած նամակներուն կցեալ անտիպ բանաստեղծութիւններ, յառաջաբան մըն ալ գրելով անոր. և մանաւանդ ու յատկապէս պիտի երկնէր քանի մը քերթուած՝ սնունդ առնելով այս յարաբերութեանէն - *Չասակս, Ծիծաղ, Անկարելին, Աղօթք Հիւանդ Տղու Մը Համար*<sup>18</sup>, ու դեռ *Իմ Սիրոյ Տենչս, Երկիրդ, Չիս Կը Սիրէ, Գոհութիւն, Այս Է Որ Ես Կ'ուզէի, Բաղձանք, Եւ Յիշատակս Այլ*<sup>19</sup>: Բանաստեղծութիւններ, որոնց բոլորը չէ որ պարագայական բնոյթ ունին, և որոնցմէ մէկ քանիին մէջ կարելի է գտնել ընդհանրականութիւնը բանաստեղծին յոյզերուն:

16- *Խօսքը թիւ 23 նամակին մասին է, էջ 92-97: Բարեբախտաբար չէ՛ փճացած ան ամբողջովին:*

17- *Արշակ Այլօջանեան, Վահան Թէքէեան Իբր Հանրային Մարդ Եւ Հրապարակագիր, Պէյրութ, 1988, էջ 288: Թէքէեանը Գահիրէի հայրութեան բանախօսութիւն մը տուած ընթացքին, կը մեջբերէ Սիրմէլեանին նամակներէն հատուած մը, որ կ'արժանանայ ծափահարութեան:*

18- *Վահան Թէքէեան, Սէր, Փարիզ, 1933, էջ 66, 79, 98, և 101:*

19- *Վահան Թէքէեան, Ամբողջական Երկեր, հատոր Գ., Գահիրէ, 1949, էջ 87, 105, 107, 125, 126, 132 և 154:*

Փ.

**ԹԵՔԵԿԱՆՆ**

**Առեղծուած Մը**

Սանճեանն ակնարկելով Թեքեանին 4 Սեպտեմբեր 1926 թուակիր նամակին, կը գրէ. «Այս նամակով ի սպա՛ն կը դադրի «հօր և զաւակի» միջև փոխանակուած արտակարգ բնոյթ ունեցող և յուզումնախառն թղթակցութիւնը»<sup>20</sup>: Ասպա կ'աւելցնէ թէ, Սիրմէլեանին իսկ հաւաստումով, «որդին» ի՛նք վերջ տուած է նամակագրութեան, որպէսզի Թեքեանը «այլևս դադրի իր մասին մտահոգուելէ»<sup>21</sup>, քանի որ թոքախտի դէմ մաքստելու համար մտած էր ստող-ջարան:

Խորքին մէջ Թեքեանին և Սիրմէլեանին նամակագրութիւնը ի սպասո դադրած է 1939-ին, Սիրմէլեանին երկու անգլիագիր նամակներէն ետք, այնուհետև վերածուելու համար միջնորդաւորուած բարևտուքի մը<sup>22</sup>: Եւ մեզի կը թուի թէ Թեքեանը կրնար վերջ տուած ըլլալ քսանականներու նամակագրական կապին, որովհետև «որդի»ին 21 Սեպտ. 1926 թուակիրը «Հայ ծանօթ գրողներու» բաժնին մէջ կը պարունակէ ծայր աստիճան դիրաբեկ զգայնութեան տէր Թեքեանը վիրաւորելու աստակ անփափկանկատ տողեր...:

**Ծանօթագրութիւններուն Մասին**

Այս հատորին մէջ ընթերցողը պիտի հանդիպի երկու տեսակ ծանօթագրութիւններու՝ լուսանցքային, տրոտոլ էջ առ էջ, և **Ծանօթագրութիւններ** բաժնով: Վերջինները թուագրուած են նամակ առ նամակ:

Լուսանցքայինները կը բաժնուին վեց խումբի--

- 1- Օտարատար օտար բառերու թարգմանութիւն՝ առաջին գործածութեան առիթով միայն:
- 2- Աստղանիշով տարբերակուող հայատար օտար բառերու թարգմանութիւն, դա՛րձեալ բառին առաջին գործածութեան պարագային միայն:
- 3- Ծեղագրով ցցունացած սխալագրութիւններու ճշդում:

20- Վահան Թեքեան, Նամականի..., էջ 45:

21- Նոյն, էջ 46:

22- Նոյն, էջ 479:

ժԱ.

**ՍԻՆՐՄԷԼԵԱՆ**

4- Յապաումներու ամբողջացում բոլոր պարագաներու:

5- Անձնանուններու ըստ կարելոյն ամբողջացում՝ տուեալ անձնանունին ստաջին գործածութեան առիթով:

6- Անհրաժեշտ նկատուած նշումներ:

Ասոնցմէ զատ, **Յատուկ Անուններու Ցանկ** բաժնով կը տրուին խիստ հակիրճ տեղեկութիւններ նամակներուն մէջ յիշատակուած անձերուն և օտարալեզու թերթերուն մասին, ըստ կարելոյն ճշդելով անձերու ծննդեան և մահուան թուականները: Անհրաժեշտ է դիտել տալ թէ Սիրմէլեանին դասընկերներէն աչդ բաժնին մէջ յիշատակուած են միայն անոնք, որոնք ազգային կամ մշակութային գետնի վրայ ունեցած են նկատառելի և յիշատակելի գործունէութիւն: Մնացեալներուն մասին ընթերցողը նամակներէն ձեռք կը բերէ բաւարար ծանօթութիւն:

**Օգտագործուած Յապաումներ**

ԱԱԼԶ- *Լևոն Զաւէն Սիրմէլեան, Լոյս Զուարթ (Քերթնածներ) Գ. տպագրութիւն և Վահան Թէքէեանի Նամակները Լևոն Զաւէն Սիրմէլեանին, խմբագրեց Անդրանիկ Անդրէասեան, Պէյրութ, 1972:*

ԱԱՎԹ- Արշակ Ալպօյանեան, *Վահան Թէքէեան Իբր Հանրային Մարդ Եւ Հրապարակագիր, խմբագրեց և ծանօթագրեց Դոկտ. Վաչէ Ղազարեան, Պէյրութ, 1988:*

ԱՄՆ- *Վահան Թէքէեան, Նամականի, կազմեց, խմբագրեց և ծանօթագրեց Աւետիս Գ. Սանճեան, Լոս Անճելըս, 1983:*

ԼԶՍԶ- Leon Z. Surmelian, *I Ask You Ladies and Gentlemen*, 5-րդ տպագրութիւն, Նիւ Եորք, 1945:

«Կ.Գ.Մ.Ա.»- Վահան Թէքէեան, *Կէս Գիշերէն Մինչև Արշալոյս*, Փարիզ 1919:

«Հ.Յ.»- Վահան Թէքէեան, *Հրաշալի Յարութիւն*, Պոլիս, 1914:

ԺԲ.

**ԹԵՔԷՆՆ**

ՅՕՎԹ- Յակոբ Օշական, *Վահան Թէքէեան*, ներածական և ծանօթագրութիւններ Վաչէ Ղազարեանի, Պէյրութ, 1985:

ՎՂՎԹ- Մամուլի Մէջ *Տպուած Եւ Անտիպ երկեր Ու Նամակներ Վահան Թէքէեանէն*, հաւաքեց ու ծանօթագրեց Դոկտ. Վաչէ Ղազարեան, Պէյրութ, 1987:

ՕՍ- Օննիկ Սիրմէլեան, *Կեանքիս Գուպարը Ջութակիս Հետ*, խմբագրեց և հրատարակութեան պատրաստեց Անդրանիկ Տազէսեան, Պէյրութ, 1988:

**Շնորհակալիք**

Այս հատորին իրագործման օգտակար դարձած են՝

- Ալաջաջեան Ստեփան
- Ակիշեան Նուպար
- Անտոնեան հայր Ռաֆայէլ
- Գալստեան Եղիա
- Էօրտէքեան Յովիկ
- Թօփալեան Նազարէթ
- Հատտէճեան Ռուպէր
- Մագսուտեան Դոկտ. հայր Գրիգոր
- Միսաքեան Արփի
- Փոլատեան Անդրանիկ
- Քէօսէեան Գրիգոր

որոնց բոլորին շնորհակալութիւն յայտնելով, կ'ուզենք նաև շնորհակալութեան խօսք ուղղել Երևանի Գրականութեան և Արուեստի թանգարանին, ինչպէս նաև Արլինկթընի, Մեսէշուսէց, Հայ Մշակութային Հիմնարկութեան անձնակազմերուն, որոնք ամէն դիպրութիւն ընծայեցին օգտուելու դիւանաթղթային կամ գրադարանային նիւթերէ:

Նույնպէս, մասնատր շնորհակալութիւն՝ Կարպիս Լ. Նազարեան Հիմնադրամի Հրատարակչական Մարմնին:

**Դոկտ. Վաչէ Ղազարեան**

# ՆԱՄԱԿԱՆԻ

# 1

Ալժէր, 15 Օգոստոս, 1922

Ամենասիրելի Պ. Վ. Թէքէեան

Այսօր Ալժէրի հասանք. առայժմ ճամբորդութիւնը  
հաճելի է ու բաւական հանգիստ:

Ձեզի կ'ողարկեմ բանաստեղծութիւն մը\*, զոր  
երէկ իրիկուն գրեցի. չըլլայ որ այդ տողերէն ուրիշ  
բաներ գուշակել ուզէք. Ձեզմէ ստացայ այնքան  
զօրութիւն, որ հաւատացէք, պիտի մնամ ամբողջ  
ուսանողութեանս շրջանին, կարծր տղայ մը:

*«Վերջին Աղօթք»ը, որ  
մտնելու մասին ակնար-  
կութիւն կ'ընէ Սիր-  
մէլեանը:*

Ծոգեմասին մէջ կան դարոցական ու զարգացած  
անձնատրութիւններ. պէտք է գիտնաք որ Ձեր տուած  
գրքերը\* արդէն քայքայուեցան, որովհետև անոնք  
ամէնուն ձեռքն են, ու այսօր անոնք կը սիրեն ու կը  
ճանչնան Ձեզի այնքան, որքան ես:

*«Հ.Յ.» և «Կ.Գ.Մ.Ա.»*

*Ձեզ*

«Վերջին Աղօթք»ը<sup>1</sup> հապճեպով գրուած է, սրբա-  
գրուած ու սեղմուած ալ չըլլալով, որով կը խնդրեմ  
որ ներողամիտ ըլլաք: Այնքան խառնակութիւն կայ  
որ, այս գրած տողերս նամակի մը տեղ ընդունելու չէ:

Ձեր աչքերուն ու ճակատին կարօտովը,

Զաւակնիդ՝

## Զատեն Սիրմէլեան

Յ.Գ. Ամէնէն աղուոր զգացումներս Պ.Պ. Գա-  
վաֆեանին ու Յ. Օշականին. ներողամիտ թող ըլլան  
իրենց առանձին նամակներ չգրելուս, որովհետև ինչ-  
պէս ըսի չափազանց խառնակ է ամէն բան:

*Գեղամ Գավաֆեան  
Յակոբ Օշական*

*«Վերջին Աղօթք»ին տակ գրեցէք (Զ. Մէլեան)*

**Նոյն**

ՍԻՆՐՄԷԼԵԱՆ

2

21 Սեպտեմբեր 1922

Ամենասիրելի Պ. Վահան Թեքեան

օր է  
Մ. Նահանգներ գաղ-  
թողներու համար սահ-  
մանուած թուաքանակ:

Պատրիկ Կիւլպէնկեան  
(Սանճեանը խորհած է  
թէ ակնարկութիւնը  
Կիւլլապի Կիւլպէնկեա-  
նին մասին է. մինչդեռ  
ան սպաննուած էր  
1918-ին...):

Սեպտեմբեր 1-ին հասայ Նիւ-Եօրք. 20 օրէ որ  
կ'սպասեմ Էլիզ-Ալլընտի մէջ, «քօթա»ն\* լրացած  
ըլլալուն համար. սակայն կը յուսամ որ մէկ երկու  
օրէն դուրս պիտի կրնամ ելլել:

Պ. Կիւլպէնկեանը մերժեց. մեր ընկերներէն մէկը  
որ մեզմէ երկու ամիս առաջ Նիւ-Եօրք եկած էր,  
առաւ յանձնարարականներս ու Ձեր նամակը և գնաց  
Կիւլպէնկեանին մօտ. Կիւլպէնկեանը որ արդէն դժգոհ  
է իր որդեգրած սաներէն, հակառակ որ ունէ առար-  
կութիւն կամ արժանիքի պակաս չէ տեսեր վրաս,  
մերժեք է: Սակայն յոյս կայ որ գալ ամառ, որովհետև  
արդէն ուշ է և դպրոցները բացուած են այս տարուան  
համար, կամ Կիւլպէնկեանին կամ ուրիշ արտբաց  
հարուստի մը զիս սան ընել յաջողին անելի տարեց և  
խելահաս մարդիկ. ես կը կարծեմ որ եթէ դիմումը  
ուրիշ անելի ազդեցիկ անձնատրութեան մը միջոցով  
ըլլար, անելի լաւ կ'ըլլար. բայց ինչ որ է եղածը եղած  
է. իմ պաղարիւնութիւնս հաստատ է, ես այս տարի  
արևուն տակ կը քրտնիմ, ու գալ տարուան համար,  
Աստուած ողորմած է, հարկաւ դուռ մը կը բացուի:

1920-ին

Երբ Հայաստան գացի,\* բնաւ յուզուած կամ  
ազդուած չէի, որովհետև գուցէ այն ատեն դեռ փոքր  
էի ու մտածումի հորիզոնս նեղ, բայց հիմա գաղա-  
փարական միջավայրէ մը զատուիլն ու այս օտար ու  
պաղ երկրին մէջ առանձինն իյնալը, բնականաբար  
ծանր է ինձի համար:

Առայժմ ունէ տպաւորութիւն չունիմ Ամերիկայէն,  
ան իմ վրաս ազդեցութիւն բնաւ չկրցաւ ընել, միայն  
Նիւ-Եօրքը ամբողջ արտովս ատեցի. բազմաչարկ շէն-  
քերն ու գործարանները, ծովսն ու սուլիչը և անոնց  
մէջ վխտացող մեքենայ-մարդերը, ինձի որքա՛ն կը  
յիշեցնեն ցածիկ տանիքն ու աղբիւրը Արևելքին, աղ-



**ՍԻՌՄԵԼԵԱՆ**

ուոր, գոյնզգոյն ու երկիւղած այդ երկրին: Անհամբեր կը սպասեմ այն օրուան ուր ես արտերուն մէջ ձեզ յիշելէն պիտի աշխատիմ:

Այս խառնակութեան մէջ գրականութեան մասին խորհիլ իսկ չէ կարելի. բայց երէկ իրիկուն հին օրերը երբ մտելէն կը յիշէի, գրեցի հետևեալ երկքառեակը:

Ձեմ գիտեր թէ արդեօք ե՞տ գացեր եմ թէ առաջ-  
շատ կը խնդրեմ Ձեզմէ ու Պ. Օշականէն որ դիտողու-  
թիւնները չզլանաք ինծի իմացնել, կամ նամակով մը  
և կամ Վահրամիսն կամ Աշոտին ըսելով. անոնք ինծի  
կը գրեն:

*Վահրամ Կաքաւեան  
Աշոտ Նշանեան*

Ձեմ գիտեր թէ արդեօք անպատշա՞ճ բան մըն է,  
կամ չափազանց համարձակութիւն մը, Ձեզմէ խընդ-  
րել, որ զիս առաջնորդէք Ձեր խորհուրդներով ու ուղ-  
ղութիւններով կեանքիս այս վտանգաւոր ժամանակի  
ճամբուն մէջ. ամենամեծ պակասը իմ մօտս. շատ  
դառն բան է խորհուրդներէ ալ զրկուած մնալը:

Զատակնիդ՝

**Զատն**

*Յ.Գ. Ծիշտ հիմա, ընկերներէս չորսը կանչեցին.  
ինծի ալ անպայման կը կանչեն դորս հանելու հա-  
մար:*

զիս

4

**ՄԻԿՐՄԷԼԵԱՆ**

*Թէքէեանը հետևեալ  
ուղղումներն ըրած է  
թողթիմ վրայ--*

*Կը փորէ, կը ճանկէ  
ծըփում կողն երկրնքին.*

*Տէր, ինչո՞ւ կը ծեծէ իմ  
հիղակն ու հոգին...*

*Տերներ կը պարեն, ի՞նչ  
խենթ պար, ի՞նչ խենթ  
պար,*

*Հոգույս մէջ...*

**ԱՇՈՒՆ ԳԻՇԵՐ՝**

Այս գիշեր, լուսնկան՝ ըսպիտակ ուրուակա՛ն,

Կը փորէ, ճանկրոտէ տատան կողն երկրնքին,

Ու քամին, զարնրած նրժուգի մը նըման,

Տէր, ինչո՞ւ կը դոփէ իմ հիղակն ու հոգին...

Ու սարսափ ու խարշափ ծառերու լուսնահար...

Տերներ կը պարեն... ինչ խենթ պա՛ր, ինչ խենթ  
պար...

Հոգույս մէջ այս ինչքան սև կտուքեր, խաչեր կան,

Ու աչեր մեռելի՛ աչերուս մէջ լալկան...:

922 Նիւ-Եօրք

Զաւէն ՄԷԼԵԱՆ

# 3

Կ. Պոլիս, 12 Հոկտ. 1922

Սիրելի Ջաէնս,

Ալժէէն դրկած քարթէդ ու նամակէդ վերջը՝ անհամբեր էի Նիւ Եորք ժամանումդ և Ամերիկայի հասցէդ իմանալու: Երէկ առի նոր նամակդ Նիւ Եորքէն, ու, ձեռքս կրակն ալ եթէ ըլլար, պիտի պատասխանէի քեզ այսօր:

Վերջերս գէշ շաբաթներ\* անցուցինք այստեղ. վախցողներ և փախչողներ, իրական ու երևակայական վտանգ՝ մնացողներուն: Այդ միջոցին քեզ յիշեցի քանի անգամներ և ըսի. Գոնէ Ջաէնը փրկուած է. ի՞նչ պիտի ընէի եթէ ինծի լսած ու մնացած ըլլար...: Հիմա հանդարտեր ենք, գոնէ առժամապէս. բայց երկու ամիս ե՛տքը: Աստուած գիտէ թէ պիտի թողուի՞նք տեղերնիս, թէ ոչ՝ պիտի ցրուինք մէկ մէկ կողմ, ինչպէս եղան արդէն ցրուողներ:

*Քեմալական շարժման  
հետևանքով ստեղծուած  
խուճապը  
կ'սկսնարկուի:*

Այս պայմաններուն տակ, որքան ալ գէշ՝ քու Kansas-դ դրախտ մըն է: Ծատ ցաւեցայ որ Կիւլպէնկեանը չէ առեր քեզ, գուցէ միջնորդին անբաւարարութեան, գուցէ մէկ դժգոհ ժամուն պատահելուն պատճառաւ: Պէտք էր սակայն որ անձամբ դիմէիր ու դիմած ես կը յուսամ: Այնքան սրտով գրած էի յանձնարարական նամակն՝ որ վստահ էի թէ երբ քեզ իր դէմը գտնէր, Պ. Կ. պիտի չկրնար ընդունելէ զատ ուրիշ բան ընել և ... վերջէն ալ՝ ի՛նք ինծի շնորհակալ պիտի ըլլար: Թո՛ղ այս առաջին ձախողութիւնը չտխրեցնէ քեզ սակայն. նկատի ունեցի՛ր Ամերիկա ըլլալու փափաքիդ իրականացման յաջողութիւնը միայն, և ասոր վրայէն՝ ոգևորուէ՛ ուրիշ նոր յաջողութիւններու յոյսով:

*Կիւլպէնկեանը*

Քեզ ո՛րքան կը հասկնամ՝ երբ, նոր կեանքի մը սկիզբը, շփոթ ու խառնակ կը գտնես շուրջդ ու անկէ ալ՝ մէջդ: Քեզ նուազ պիտի սիրէի եթէ այդպէս չըլլար, եթէ անզգած անցնէիր այս մեծ նորութեան մէջէն կամ եթէ չունենայիր ատիկա ըսելու անկեղծու-

**ԹԵՔԵԵՆՆ**

թիւնը: Անոր համար իմ մեծ եղբօր հոգածութիւնս, հայր չեղած մարդու պահուած աղապատանքս և բուրովի՛ն չանցած պատանութեան մը անուշ երազները փոխադրեցի քու վրա՞ որովհետև զգացումն ու կորովը, նրբամտութիւնն ու ազնուութիւնը միացած գտայ մէջդ: Հարազատ բանաստեղծը, որուն յայտնութիւնը կը հմայէր և կը խանդավառէր զիս նաև, հակառակ իմ մեծ գնահատումիս այնքան չէր կշռեր առանձինն՝ որքան մնացեալը, որքան ամբողջութիւնը, որուն մէկ մասն էր ան միայն, յայտարար մասը անշուշտ, որուն կը պարտէի քեզ ճանչնալս և այդ պատճառաւ ալ կրկնապէս սիրելի էր ինծի բանաստեղծ Ջաւէնը: Ես ուրախ էի յուսալով որ կրնամ քեզի օգնել քու գրկանքիդ մէջ՝ ոչ թէ կարեկցութիւն ալ քու էութեանդ արժէքին համապատասխան գորով ու սէր ցոյց տալ քեզի: Ասով ես ալ աչքիս կը բարձրանայի և կը վերապատուրդուէի քիչ մը, որովհետև ասանկ անշահախնդիր, մաքուր ու տաքցնող զգացում շատոնց է որ ունեցած չէի և այսքան տեղի՛ն՝ երբեք:

Ասոնք գրեցի, առանց վերապահումի և շատ բարակը չնայելով, որպէսզի բոլորովի՛ն վստահ ըլլաս վրաս և այստե՛տև չխորհիս թէ խորհուրդ մը կամ *ոնէ* ծառայութիւն մը ուզելով ինձմէ՝ «չափազանց համարձակութիւն» կամ «անպատշաճ բան մը» ըրած կ'ըլլաս: Դուն ինծի այնպէս մօտ ես, ըսի արդէն, ինչպէս իմ կրտսերագոյն մէկ եղբայրս կամ սրտի և մտքի զաւակս, և մեծագոյն հաճոյքով է որ պիտի թղթակցիմ հետդ միշտ, փափաքելով որ այնքան օգտակար ըլլայ իմ համակրութիւնս քեզի որքան քու վստահութիւնդ օգտակար է ինծի:

*մը-ն չի պատշաճիր  
նախորդ տողի ոնէ-  
ին*

Հոգիդ՝ դեռ ինչ ալ ըլլայ թա՛րմ ուժը, պիտի չդիմանար անոր փափկութեանը քով, անայլալ դէմ-յանդիմանելու համար Ամերիկան՝ իր զուտ ուժի և տգեղ ուժի երկաթէ ու քարէ զանգուածներովը: Կը հասկնամ, խեղճ պզտիկս, քու կծկումդ անոր դիմաց և քեզի ընտանի տեղերուն ու դէմքերուն սրսփող ու լացնող ոգեկոշումը՝ այդ շարժուն և անշարժ, քեզ չտեսնող ու քու տեսնել չուզած ամբոխիդ մէջտեղ: Բայց դուն միտքդ դրած ես, այնպէս չէ՞, թէ սահելով և ոչ թէ բաղխուելով, պիտի անցնիս անոնց մէջէն,

**ԹԷՔԷՆԱՆ**

անոնցմէ առնելով ինչ որ քեզի պէտք է քու նիւթական ուժդ անելցնելու և հոգեկան գործունէութեանդ միջոցները զօրացնելու համար: Այդ պահուն, սակայն, և որքան ալ խիստ ու կոշտ ըլլայ նիւթական կեանքդ, պիտի աշխատիս, տղա՛ս, որ սիրտդ մնայ ինչ որ է, յիշել, յուզուիլ և կապուիլ գիտնալ անձերու և իրերու, որ ունենայ միշտ իր թաքուն պարտէզը կամ իր պզտիկ մատուռը, ուր սրբանայ և մանկանա՛յ, վերստին, ուր ամէն բան մեծ և մաքուր *տեսնայ* և բորբոքի և խենթանայ...: Եւ ունեցի՛ր մէկն ալ մօտդ՝ որուն մէջ մոռնաս ինքզինքդ:

*տեսնէ*

Ոտանաւորդ սիրեցի՛ ինչպէս միշտ: Ետ կամ առաջ երթալ չկայ երբ դուն դուն ես: Եւ դուն որ էութեամբ բանաստեղծ ես, այդ կասկածը պէտք չէ ունենաս այլևս: Կը համբուրեմ քեզ շատ սիրով և երկիրաճողութեամբ:

Քոյդ

**Վահան Թէքէան**

*Յ.Գ.- երկու խնդրանք. Ա. Գրէ՛ ինձի ինչպէս հօրդ պիտի գրէի՛ր՝ եզակի. Բ. Առաջին առթիւ որ լուսանկարդ ունենաս՝ դրկէ՛ ինձի հատ մը:*

**Նոյն**

8

**ԹԷՔԷՆՆ**

**ԿՈՒՋԵՄ ՄԷԿԸ\***

Կուգեմ մէկը – ուզելու վարժութիւնն իսկ կորուսեր,  
Կարծես մոռցեր եմ հիմա –  
Որ փոյթ չէ թէ ինձ համար չզգայ բնաւ ոչ մէկ սէր,  
Բայց որ իմ սէրըս գիտնայ:

Գիտնայ՝ գառնուկը ինչպէս զինքը սիրողը գիտէ,  
Գիտէ թոշունն ալ ինչպէս,  
Եւ կ'որոշէ զայն իսկոյն ուրիշ ամէն մարդերէ,  
Անոր հետ քաղցր է ու հեզ...:

Չըսիրելով հանդերձ զիս՝ երախտագէտ ինձ ըլլայ  
Ձինք սիրելուս համար շատ.  
Սիրէ՛ սիրուիլը ինձմէ և դընէ վիզն ուսիս վրայ  
Վստահութեամբ մը ազատ...:

Իմ բառերուս փոխարէն՝ որոնք մանկան մը ըսուած  
Անուշ բառեր պիտ' ըլլան,  
Ան մերթ ինձի ձեռքն իր տայ և մերթ խոհուն  
երկիւղած  
Երկար նայուածք մը միայն...:

Աղոտը չըլլայ, բայց ըլլայ ծաղկահասակ ու մաքուր,  
Մաքուր մարմնով ու սրտով,

**ԹԷՔԷՆԱՆ**

Ըլլայ յաճախ կենսութախ բայց և երբեմն տղխտուր-  
Լոյս և ըստուեր քովէ քով...:

Փափուկ ու տաք ձեռքերով հըպի՛ր երբեմնն հոգւոյս՝  
Նըման վէրքի մը ցատտ,  
Եւ մահադէմ խոհերուս վըրայ ծագի յանկարծ յոյս,  
Գիշերն ըլլա՛յ ստաւօտ...:

Այսքանը բաւ է ինձի, կ'ուզեմ այսքա՛նը միայն  
Եւ գիտեմ թէ չունենամ  
Պիտի երբեք զայն հիմա, և մոռցե՛ր եմ ահա զայն,  
մեռցե՛ր ուզելը անգամ...:

*(\*) Այս ոտանատըրը, Ջաւէ՛ն, քեզի դէմ յանցանք  
մըն է գիտեմ. բայց երկար ստեճէ՛ ի վեր չէիր գրած  
ինձի ու օրուան կեանքը իր լքումներն ու յուսահատու-  
թիւնները և անմիջական սփոփանքի կարօտներն ունի  
երբեմն որոնցմէ մէկուն մէջ գրուած է սսիկա: Ջայն  
քեզի կը դրկեմ ինէ իբրև զղջում և քեզի՛ իբրև... քա-  
ջալերութիւն մը միայն: – Ի՞նչ գրած ես «Ժող-  
ջայն[ը]»ին՝ մէջ, անգամ մ'ալ ստը ըրէ՞:*

Ժողովուրդի

**Վ.Թ.**